


ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան Ծրք 10
Վեցամսեայ » 5
ԻԱՆԽԻՆ

20
ՍԱՆԴԻՄ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման
Տարեկան Ծրանք 12
Վեցամսեայ » 6
ԿԱՆԽԻՆ

20
ՍԱՆԴԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

Կը հրահարակոտի ճարար օրերը : Ծա-
նուցման տողը 10 Սանդիմ : Երկու քիւ ա-
ռաջ հրահարակոտած քերքը 40 Սանդիմ :
Չհրահարակոտած գումարի մը ետ յսրուիր :

Հասցե
DIRAN PAPAZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNA

ԱԶԳԱՅԻՆ

Ռուսիոյ կրթական նախարարութիւնը
Թիֆլիզի Ռուս թերթերուն միջոցաւ կը յայ-
տարարէ թէ, կրթական նոր օրէնքին հա-
մեմատ Ռուսահայոց ծխական կամ ժողովր-
դական դպրոցներուն Ուսումնական վասը
կրթական նախարարութեան ձեռքը կ'անցնի
այսուհետեւ, իսկ տնտեսական մասը ամբող-
ջովին կը մնայ հայ հոգեւոր իշխանութեան :
(Վ. յօդոյն՝ Հայ ժողովուրդը պիտի հայթայ-
թէ զրամը՝ իր դաւակները ըստ ռուսականին
կրթել տալու համար) : Եւ այն նախարարու-
թիւնը պիտի տայ ուսմանց առարկաներուն
ծրագիրը, իսկ դասերը միայն ռուսերէն պի-
տի աւանդուին, ի բաց առեալ հայ լեզուի
և կրօնի ուսումնի որ պիտի շարունակուի
հայերէն :

Գուրեան Տ. Եղիշէ Ծ. Վարդապետ
վերջին խառն ժողովոյ սրոշմամբ Արմաշու
դպրեվանուց վերատեսուչ և փոխ-վանահայր
կարգուեր է :

Անցեալ չորեքշաբթի օրը գումարուած
Կ. Պոլսոյ Կրօն. Ժողովը՝ ի մէջ այլոց հետե-
ւալ որոշումն ալ տուած է .

« Հումայի թաղ. խորհուրդը տեղեկու-
թիւն խնդրած էր Կրօն. Ժողովէն թէ Տէր
Գարեգին քահանայ Արծրունի որ այս օրերս
հոն կը գտնուի, կրնայ պաշտօն վարել տեղ-
ւոյն եկեղեցիին մէջ : Ժողովն որոշեց պա-
տասխանել թէ յիշեալ քահանայն արտօն-
ուած է քահանայագործելու » :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԻՔ «ՀԱՅԵԼԻ»Ի

ՀՐԷՇ — ՄԱՐԴԸ

Լոմբարդներ, 11 Սեպ.

Տէր Խմբագիր,

Զարուշուք ու քստմենքի դէպք մը պիտի
պատմեմ Ձեզ, իր ամբողջութեամբ ճիշդ ու
վաւերական, զոր կը յուսամ թէ Ձեր էջե-
րուն մէջ զետեղելու շնորհը չպիտի զրանաք :

Ինչպէս ուրիշ քաղաքներ, նոյնպէս և մեր
քաղաքը եկած էին 127 գաղթականներ, մեծ
մասամբ առանց ընտանիքի եւ որբեայրի կի-
ներ, որոնց անմիջական պէտքերը հոգացուե-

ցան Ռուսճուգի գաղթականաց մասնախմբին և քաղաքիս սակաւաթիւ Հայերուն նպաստներով :

Ասկէց մէկ երկու ամիսներ առաջ Ս. Շ. Բահովաէ մեր քաղաքը գալով, գաղթական ընտանիքներու մի առ մի այցելութիւն կուտայ և անոնց նպաստ կը բաշխէ 5—10—20 սանթիմ. պմենէն վերջը կայցելէ տուն մը, ուր գաղթական որբեայրի կին մը կը բնակէր 35—40 տարեկան, կայտառ և գեղադէմ. մեր գթասիրտ այցելուն զգաճեալ այս միայնակեաց կնոջ թշուառութենէն, մէկ լէշ կը շնորհէ առատաձեռնաբար ու մէկ երկու ժամ խօսակցելէ ետքը, իրեն ընկերացող գաղթական պարոնին հետ կը մեկնի, իր թաշկինակը լուսլու համար կնոջ ձգելով: Նոյն գիշերը վերստին կ'այցելէ կնոջ տունը. դուռը կը զարնէ և «այս գիշերուան շոգենաւով պիտի մեկնիմ, եկայ թաշկինակս առնելու», ըսելով ներս կը մտնէ. հէք կինը առանց կասկածելու, կարծելով թէ աղնուասիրտ այցելուն շուտով պիտի մեկնի, թաշկինակը կուտայ. Ս. Շ. նստելով կըսէ, «այս ի՞նչ գէշ քաղաք է, ժամը դեռ ինն է, շուկան և հօթէլները բոլորը գոց են, շոգենաւն ալ առտուան դէմ կուգայ, ի՞նչպէս ժամանակ անցունելու է, չեմ գիտեր. քունս ալ եկաւ, սա տեղ քիչ մը պառկիմ»: Այս ըսելով մեր ինքնակոչ հիւրը ոտքերը կը տնկէ ու կը սկսի քնանալ ձեւացունել:

Կինը զարմանալէ ճարը հատած, ինք ևս կը ստիպուի մէկ կողմ քաշուելով քնանալ տախտակին վրայ, որովհետեւ ոչ ուրիշ սենեակ ունէր և ոչ ուրիշ անկողին: Բայց հազիւ հազ քնացած է եղեր, մեր բարեսիրտ պարոնը իր չար մտադրութեան ժամանակը հասած համարելով կը յարձակի կնոջ վրայ ու թռնոթեամբ պատիւը կը բռնաբարէ եւ նոյն գիշերն իսկ կծիկը կը դնէ դէպ ի Բահովա:

Կինը առաւօտուն եղելութիւնը կը պատմէ մեզի լալով ու անէծք կարգալով:

Քանի մը օր վերջը կինը կրկին եկաւ մեզ, այս անգամ աւելի ցաւալի լուր մը բե-

րելով, մեր գթասիրտ Պ. Ս. Շ. իր ունեցած գարշելի Հիւանդութիւնը կնոջ փոխանցած էր: Մինչև այսօր խեղճ կինը կը տառապի:

Ահա Հայր եւ Հայուքիւնը:

ՀՈՒՐ

Կը լսենք թէ Առնաթիւ թաղ. խորհուրդը մտադիր է վարժարանին շինութիւնը աւարտելէն ետքը Չարպօրիս պողոտային վրայ եկեղեցւոյ ունեցած մէկ ընդարձակ գետնին վրայ շինել երեք խանութներ ու անոնց վրան ալ տուն մը, որ տարեկան առնուաղն 100 ոսկւոյ եկամուտ մը պիտի բերէ:

Թաղ. խորհրդոյ սոյն մտադրութիւնը գոհունակութիւն կը պատճառէ ամեն կարգի ազգայնոց:

Տ. Սապահկիւնեան, «Արձագանք» թղթակիցը 10 ոսկի ամսականով Ռուսճուգի վարժարանին տնօրէն կարգուեր եւ արդէն հասեր է նոյն քաղաքը. Պուրկաղի վարժարանին նախկին ուսուցիչ Տ. Քէնտիկեան ալ արդէն ըսկսեր է Ռուսճուգի վարժարանին մէջ պաշտօնավարել: Իսկ աղջկանց վարժարանին համար երկու վարժուհիներ որոշուած են, Օր. Բերուզ Տիգրանեան եւ Օր. Ֆէսճեան:

Մաղթենք որ այս փայլուն տնօրէնութիւնները փայլուն ալ արդիւնք արտադրեն:

Երէկ իրիկուն հետեւեալ քաղթ—բօսթալը ստացանք Փ. Պոլսէն.

Առ Տիար Բոժոժիկ,
Հետաքրքիր ենք իմանալ թէ դուք ալ վախճան պիտի ընէք:

Ա. Մ.

Բոժոժիկ. — Մենք վարժարան չենք յաճախեր որ վաքանս ալ ունենանք:



Սիլիսթրա 17 Սեպ.

... Տէր,

Գ.Ժուար չէր գուշակել թէ «Մշակի» մէջ երեցող եւ խմբագրականի ձեւով գրուած յօդուածը նոյն լրագրոյ Ռուսճուգի թղթակէին (°) գլուխ գործոցներէն էր, որ «Հայելի» անաչառ շաբաթաթերթի ազդու հարուածներուն ներքեւ իր դիմակը իր յեղեղով գաղափարներուն նման փոխելով, այս անգամ խմբագրի տարազով կուգար ի յայտ:

Հաստ բնական կը գտնեմ իր այս երկչոտութիւնը, որչափ անբնական՝ Մշակի խմբագրութեան համարձակութիւնը: Ա՛րեւելի թէ «Մշակի» խմբագրութիւնը չի բաւականալով Ռուսահայ թերթերու անընդհատ հարուածներէն, շեր լրաբեր Բոթոփիկի հարուածներն ճաշակելու ախորժակն ունի, ամենեւին չգիտնալով թէ անոր հարուածները չեն նմանիր անոնց՝ զոր ճաշակած է եւ կը ճաշակէ հանապազանք թէ չի հաւատար, թող իր Ռուսճուգի թղթակցին դիմէ—:

Արգահատելի՛ գահավիժում...: Արդեօք ողբացեալ Արծրունի մտքէն կ'անցունէ՞ր թէ իւր այնչափ սիրած թերթը, որոյ համար իր կենաց լաւագոյն տարիները զոհած էր, ապագային մի քանի գրչակներու ձեռքը մնալով, պիտի ստորնանոր հայ մամուլի նախատիւն բերելու չափ:

Թողէք ուրեմն, ո՛վ անգութներ, թողէք «Մշակ»ը իր նախկին փառաց մէջ եւ Արծրունին իւր շիրմին մէջ հանգիստ, զի ձեզ համար խմբագրութենէ աւելի յարմարագոյն պաշտօններ (°) չեն պակսիր:

ՍՄԲԱՏ

ԳՐԱԿԱՆ

ՄԻՆԱԿ ՊՏՏԱԾ ԱՏԵՆՍ

Ճակատագիրը ամենէն մեծ կատակերգակ դերասանն է:

Դէմքին ըրած առաջին տպաւորութիւնը

ամենէն անկեղծն է. կրնայ ըլլալ որ մէկուն առաջին դէմքին չը համակրելով հանդերձ անոր հետ մտերմանաս. բայց միշտ պիտի գայ օր մը ուր առաջին տպաւորութիւնդ պիտի յիշես:

Հրեշտակային ապուշ մ'է այն պատանին որ թշուառ է, աղքատ է ու... կերազէ:

Ար սիրենք, կը սիրահարուինք: Երբ օր մը նշանուինք կրկին կը սիրահարուինք:

Ամուսնութեան առաջին քանի մը գիշերները մեր սէրը իր *maximum* հասած կը մնայ ու ալ անկէ ետքը կսկսի հետզհետէ քակուիլ այն դերձանը որ մեր սիրոյ ճախարակին վրայ բաթթուեցաւ:

Հարսնիքին օրը որքա՛ն կարճ կը տեւէ ծնողաց համար. ու ընդհակառակը որքա՛ն երկար անհամբերութենէ տոջորդ նորապսակներուն համար:

Երբ լուսնկան զմեզ այնքան կը տիրածեցնէ երջանկութեամբ, չէ՞ անոր համար որ մեր քովը կամ հեռուն պաշտելի հրեշտակ մը կայ իր մեղամաղձոտ երազուն աչիւրը անոր սեւեռած:


Օ՛հ, ի՛նչ տխուր ու քանի՛ նախանձելի բան է որ տարիներ ու տարիներ անհուն գուրգուրանքով մեծցունես տանը հրապոյր ու երջանկութիւնը եղող կոյսը, որպէս զի օրին մէկն ալ անծանօթ մը գայ՝ այդ հազիւ բացուած վարդը բրցունէ՝ ու երթայ անանկ անասնձ կատաղութեամբ մը հոտոտէ զայն որ շուտ մը խամրի:

Ամենէն քաղցրալուր երաժշտութիւնը իսկ կը կորսնցնէ իր ազդուութիւնը ու հրապոյթը եթէ շատ ու շատ մօտէն իմանանք: Այսպես է նաեւ ամենէն գեղանի ու հմայիչ կնոջ համար ալ:

Ինքզինքնիդ յարգե՛լ տալ կ'ուզէք, ձեր արժանիքը չարաչար չը գործածել գիացէք:

Ամէն ձախօղութիւն, ամեն յուսահատեցուցիչ վիճակ, ամեն պատրանք ենթակային փորձառութեան քայլ մ'ալ առնել կուտայ:

ԲԱԲԷԼ



ՎԱՐՊԵՏՈՐԴԻ ԱՂՋԻԿ ՄԸ

Բնիկ Ահնգի 45 տարեկան սեղանաւոր Դամիանոս աղան, որուն կինը 3 տարի առաջ մեռած էր, անցեալ տարի Պոլսէն Պուլկարիոյ հայաշատ քաղաքներէն մէկը գալթելով հոն կը հաստատուի եւ սեղանաւորութեամբ կը սկսի զբաղիլ:

Սոյն անձը, անցեալները նոյն քաղաքին հասարակաց պարտէշին մէջ գիշեր մը կը տեսնէ հայ ընտանիք մը, որուն 18 տարեկան Մագթաղինէ անուն գեղանի աղջկանը հաւնելով, հետեւեալ օրը անոր ձեռքը կը խնդրէ հօրմէն:

Եւ որովհետեւ Պուլկարիոյ մէջ տակաւին կը գտնուին այնպիսի ծնողքներ, որոնք առանց զաւկնուն կարծիքը առնելու խօսք կապ կամ նշան կ'առնեն կուտան եւ գրտութեանց պատճառ կրկան, այսպէս վերոյիշեալ օրիորդին հայրն ալ Դամիանոս աղային ունեւորութենէն շրջած՝ կը հաւանի աղջկը անոր կնութեան տալ:

Խեղճ օրիորդը այս լուրը առնելուն պէս կը տրտմի եւ մօրը կը սկսի գանգատիլ թէ իր սրտին չի սիրած այն մարդուն հետ ի՞նչպէս պիտի ամուսնանայ:

Հօրը պէս տգէտ մայրն ալ կը ջանայ համոզել աղջկը թէ նշանածը Պոլսոյ մէջ կրթուած եւ բաւական հարուստ ըլլալով՝ ամեն կերպով իրենց կը յարմարի, ուստի պարտաւոր է անոր տուն եկած ատեն վայելուլ յարգանքով հետը վարուիլ:

Օրիորդ Մագթաղինէ կը ստիպուի ձայնը կտրել, բայց կ'որոշէ անգամ մըն ալ տարիէ մ'ի վեր իրենց բարի զրացնութիւն

ընող Պոլսեցի գալթական ընտանիքի մը աղջիկանը, օրիորդ Տիրուհին բանալ խնդիրը, որուն հետ քրոջ պէս կը տեսնուէր: Ուստի զայն իրենց տունը հրաւիրելով, պարտեզը ծառի մը տակ կը նստին:

— Գըզ Տիրուհի, սա նա պիտի չօգտէյ՞ճէքլէրիմ՝ վար:

— Խայր օլա:

— Պէնի նիշանլատըլար:

— Էյ սէվինսէ՞նէ:

— Քա նա՞սըլ սէվինէլիմ, նէ՛ քիմ օլտուղընը թանըրըմ, նէ տէ նա՞սըլ ատամ օլտուղընը պիլլիրիմ:

— Պիր գաչ տէ՛թա էվլէնտիլիմ եօգ աւա, տէլլէր քի պսակ մուհապէթ կէթիրի, նէ՞ զարարլ վար:

— Էյի ամա պէն տահա եիւղիւնի կէարմէմիշիմ, հալ իթմէյօրըմ:

— Այլը պուրանըն ատէթի՛ գըլլարա սէօղ տիւշմէլ իմիշ:

— Էյլէ տիւր:

— Օնլարըն պէլէնտիկինի սէն տէ գապուլ իտէճէքսին, էլվէրիր քի իհթիւար օլմասըն:

— Էն զիյատէ եիւրէլիմէ տօգանան եէրի՛ նիշանլըմ ծլաճագ ատամ հաճի Զարօնկիլ կիպի էկինլի իմիշ:

— Էյ ֆէնա՞ մը, պուլտան սօնրա պօլ պօլ գուրու գայմագ գուրու թուլթ եէյէճէքսին:

— Աման Տիրուհի, պէն սէնէ չըլըրտըմ՝ քի պանա պիր չարէ տիւշիւնէսին, սէն իսէ:

— Մագթաղինէ, շիմտի սանա նէ՛ տէսէմ պօշ տըր, տահա նշանլընըն եիւղիւնի պիլէ կէօրմէմիշսին:

— Պու բաղար կիւնի կէլէճէք իմիշ:

— Պէլքի էյի ատամ տըր տէ հաղիտէճէքսին, հէմ, էկինլի օլմայըլա ֆէնա՞ մը օլուր:

— Ֆէնա օլմալ ամա՞ շու պէն իսթէմէյօրըմ:

— Պանա սօրարսան՝ հէլէ պիր տէֆա քէնտիսինի կէօր տէ՛ պէյէնմէզ իսէն պիր

չարէսինի պուլուրը, շիմտիլիք դալ սաղը-
ղըլան :

— Վա՛ր սաղըլըճագըլան :

Եւ օրիորդ Տիրուհին կը մեկնի :

Նոյն շաբաթուան կիրակի օրը Գամիա-
նոս աղայն աղջկան տունը կերթայ, ուր
տանտիկնոջ կողմէ գիմաւորուելով՝ սենեա-
կին մէկ անկիւնը փառաւորապէս կը բացի :

Տիկինը — Հօշ կէտինիդ Մամիանոս
աղա :

— Սէֆա պուլաուգ էֆէնտըմ :

— Նէ՞ վար, նէ՞ հօգ, օրթալըգտան
նէ՞ հապեր :

— Էֆէնտըմ, ծառայականս ադ խու-
սուին թէքմիլ մալիւմթ մի թափալ արած
չիմ իսէ թը՝ ըմմէն մարդ էնճամիւլ քէլամ
տէսթ տէսթի վրայ չի տի նստի ես՝ հէլ-
պէթտէ ճամբայ մի տի գննայ ու քալէ : Է-
ֆէնտըմ, քիւչիւք խանըմը կէօրէմէյօրըմ,
խաւթա իսէ՝ պէիս հօգ տուր, սալը վա-
խըթ կէօրիւրիւք :

— Խա՛յըր, իւթիւնիւ տիւղէլթիյօր,
չիմտի կէլիւր :

— Քիւնչիւմ, մալիւմ ա՛, ըմմէն բան
իֆատէ տ՛անինք, հանում ախչինին հըմար
տար քէթէրիլի մատտէ մի է ասի :

— Շիւքիւր Ալլահա, արթըգ սիդ տի-
չարտան առում՝ սոյըլմադսընը քի սիդտէն
չէքիսսին : Իշթէ քէնտիսի տէ կէլիյօր :

Օրիորդ Մագթաղինէ, ամօթխածու-
թնէն գէմքը կարմրած՝ սենեակ կը մտնէ
ու նշանածը տեսնելով՝ Տէճէին անդիի աշ-
խարհքէն վերագարծը կը յիշէ, բայց ակա-
մայ աթուռի մը ծայրը նստիլ կը պարտաւորի :

Իսկ Գամիանոս աղան օրիորդը սես-
նելուն պէս խելքը գլխէն կը թռցնէ :

— Հանում ախչին, էկոր քանկս մէօ-
տըս նստէ, պալմական քէֆիկդ ընտօր է :

—

— Հը՞, խօրաթէ էֆէնտըմ, խօրա-
թէ ուր իմանանք :

—

— ԱՖ էտէրսինիդ Մամիանոս աղա,
նէ գատար յլսա՝ պիր գըլ՝ իլք կէօրիւշտէ
օ գատար աշըլամագ, իլէրուտէ պիրպիրինի-
վէ ալըշըրսանըլ :

— Էֆէնտըմ, ադ խօրաթաները դար-
տակ բաներ եին, էնճամիւլ քէլամ, ինչալ-
լահ պէնիմ էօղ պէ էօղ էհիմ օլաճագ տէ-
կիւլ մի, էտանկ նաղ ու նիւազները պի-
տաւոր բաներ չին, էկէր աս տեղի ատէթը
աս է նը՝ ատի չը գիտիմ :

— Ախ, ճանըմ Մամիանոս աղա, գըլ-
լարըմըլըն շու թապիյէթի վարքի՝ ութան-
կան տըրլար :

— Ութանաճագ նէ՞ վար քի էֆէնտըմ :

— Հէր նէ հալ իսէ, պու կիւնիւք
պէօյլէ կէչսին տէ՝ իքինճի տէֆա օլարագ
կէլտիղինիլտէ :

— Նէ՞ տէմէք էֆէնտըմ, վաղը նորէն
տի գամ, մէկալն օր ալ տի գամ, հասըլը
քէլամ ըմմէն օր տի գամ, — ըսիլէն ետքը
անուշ եւ սուրճ մը կ'առնէ ու կը մեկնի :

Օրիորդ Մագթաղինէ անմիջապէս օ-
րիորդ Տիրուհին կը կանչէ, որուն հետ դար-
ձեալ պարտէզը կ'առնանան :

— Տիրուհի, պու կիւն նշանլըմ կէլտի :

— Աման, սէօյլէ պագալըմ նասըլ
ատամ տըր :

— Եաշը էլլիյէ եագըն տըր, չօգ ղէն-
կին իմիշ, նէ՞ եաբայըմ, ուֆագ եօլլու պիր
սիւմքիւրտիւ՝ զանն էթտիմ քի պիր գապա
պօռու էօթտիւ :

— Աննատըմ, հէփսի իշինտէ տիր, նա-
ֆիլէ եիւրէյինի օյնաթմա, նէ՞րէտէն տէ
գարշընըգա չըգմըշ պու մաթահ :

— Պիմէմ, չըգմազ օլայըտը :

Օրիորդ Տիրուհի քիչ մը մտածելէն
ետքը — Շիմտի պու պէլատան գուրթուլ-
մագ իշին սանա պիր եօլ կէօսթէրէպիլիլիլիմ
ամա՝ սէօղիւմի տիննէյէճէթմիսին :

— Էվլէթ :

— Էկէր ութանըպ չէքիսիսէն՝ պու
ատամըն էլինտէն գուրթուլուշ հօգ տըր :

— Պէնիմ էլլիկիմ իշինտէյիլ մի, հիշ

չէքինմէյէճէիմ, սէջլէյէճէքլէրինի իճրա ի-տէճէիմ:

— Էջլէ իսէ, նշանըն կէլտիղինտէ, կայէթ եպընիյէթ կէօթէրիպ շու հալլէր-տէ պուլունաճագսըն, — ըսելով, Մագթաղի-նէին ընելիքները կ'իմացնէ ու յաջողութիւն մաղթելով կը մեկնի:

””

Այն օրէն սկսեալ Գամիանոս ազան յաճախ կերթեկէ իր նշանածին տունը. օրիորդն ալ, բարեկամութիւն առած հրահանգին համեմատ կը սկսի տնանկ ձեւեր ընել, իբր թէ նշանածը վայրկեան մը չի տեսնելովը խելքը պիտի թռցունէ: Այսպէս քանի մը շաբաթներ անցնելէ ետքը, օրիորդը օր մը Գամիանոս աղան սենեկին մէջ առանձին գտնելով կը հարցնէ թէ ե՞րբ պիտի ամուսնանան:

— Էֆէնտըմ, միւսկէթ էլմասիյի պէս ան աղւոր ու կլոր կարմրուկ երեսիգ մեռնիմ, ագ խուսուսը քու ձեռքդ է, էմր արէ էֆէնտըմ, էմր արէ:

— Հա՛շա, պէն տաիմա սիզին էմրինի-զէ իթաթ իթմէյէ պօրճլուերմ, պունտան սօնրա պէնիմ սահիպիմ սիզ օլաճագսընըզ,

— Վայ լեղիւդ ուտիմ հանսւմ ախշին, անգամ մի ագ աղւոր աշվինքովդ սանկս մէյ մը մայմուռ նայէ ուր՝ Փօքիս բացուի:

(Շարունակելի)

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ

Աժանու Բոժոժիկ եւ Ընկ.

Պաթում 16 Սեպ.

Մանթաշօք եղբարք իմանալով որ Խաւարակոռն Ասիրիկէն փոխադրուած է Վառնայի հայ ընթերցարանը, յատուկ շոգենա-ւով 2 սնտուկ կազ ճամբայ հանեցին:

Վառնա

Ընթերցարանի սակաւութիւ ընթերցող-ները վերոգրեալ հեռագրին վրայ մեծ ու-րախութիւն զգալով շնորհակալութեան ու-

ղերձ մը խմբագրել որոշեցին: Յայտնի է որ այս խնդրերը ժամանակէ մը ի վեր գիշեր-ները դատապարտուած էին լուսնի լուսով կարգալու, իսկ լուսին չեղած գիշերներն ալ... շամալը փայրիթով:

18 Սեպ.

Սնտուկները հոս հասան, և, ընդ հըս-կողովութեամբ ընթերցարանի անկեալ պաշտօ-նէից, շոգենաւէն նաւամատոյց փոխադրուած ատեն, փրփրադէղ ալիքներուն մէկ յանկար-ծական թափովը մակոյկը շրջեցաւ և կազերն ալ Յովնան մարգարէին պէս ծովամոյն ե-ղան:

Մուլթը դարձեալ կը տիրէ ընթերցա-րանին մէջ:

Կէս գիշեր

Ընթերցարանին պատերը լեզու ելան ու սկսան դռնել, «Լոյս տուր, տէր, աչաց մերոց»:

Ուլիցա Չարպօրիս

Տ. Պարեգին բահանայ Արծրունիի Շուժ-լայի եկեղեցւոյն մէջ պաշտօնավարել սկսե-լուն լուրը՝ հոս մէկ քանի կղերականաց փո-րի ցաւ պատճառեց:

Բոժ. — Աստուած բժշկութիւն պար-գեւեցէ:

Ընթերցարանի անկեալ պաշտօնէու-թիւնը արտօնուեցաւ ընկղմեալ կազին սըն-տուկները ծովէն հանելու համար սուզակնե-րու ընկերութեան հետ քաղաքի մանել:

ԱԶԴ

100 Այցաբարտը երկու ֆրանքի կը տպագրուին: Դիմել «Հայլի» խմբագրու-թեան: Քաղաքներէ ըլլալիք յանձնարարու-թեան թղթատարին ծախք 30 սանդիմ յանձ-նարարողին վրայ է: Դրամի փոխարէն Պուլ-կարական 5, 10 եւ 15 սանդիմնոց նամա-կադրօշմ կր'նդունուի:





— Պ. Տօթթօւ, կնոջս հիւանդութիւնը
ի՞նչ է:

— Արնամ՝ ըսել թէ ձեր կինը նոր
գլխարկի ջերմ ունի:

— 0 —

Հաւ մը իր թոռներ կը հարցնէր ըսէ
նայիմ՝ Խաչիկս, երբոր մեծնաս, ի՞նչ ըլլաւ կը
փափաքիս, բժիշկ թէ փաստաբան, երկրա-
գործ թէ մէքենագործ:

— Չէ՛, մեծ հայրիկ չէ, ատոնց և ոչ մէ-
կը չ'եմ ուզեր ըլլալ:

— Թերեւս վաճառական...

— Այդ ալ չէ՛,

— Կամ սեղանաւոր.

— Ամենեւին.

— Հապա ինչ՞ կուզես ըլլալ.

— Կը փափաքիմ՝ քեզի պէս ծերուկ
մ'ըլլալ, որ ոչ կ'աշխատի, ոչ կը գործէ, այլ
միայն հարցումներ կ'ուզէ տողոց:

— 0 —

Կոշկակար մը, որ արբեցութեան յոռի
մոլութիւնն ունէր, Ամերիկա կը գաղթէ բազմ
փնտռելու համար: Երբ Հափր նաւահան-
դիստը կը հասնի, կնոջը կը հեռագրէ հե-
տեւեալը.

«Սիրելի կինս, այս երեկոյ 900 տա-
կառաչափի նաւով մը ծամբայ ելայ»:

Կինն ալ կը պատասխանէ.

«Եթէ ծամբան երկայն է, չպիտի բա-
ւէ քեզի»:

— 0 —

ՕԳՏԱԿԱՐ ԽՐԱՏՆԵՐ

Կաղամբ (լտհանա) եփել.

Յայտնի է որ կտղամբը անախորժ հոտ
մը ունենալուն՝ ոմանց ստամոքսը կը յոգ-
նեցնէ: Այս անպատեհութեան առաջ քն առ-
նելու համար պէտք է կաղամբը եփուելու
ամբողջ միջոցին՝ սանին (թէնճէրէ) մէջ դնել
լաթի մէջ ծրարուած հացի միջուկ, որ կա-
ղամբին կծուութիւնը ամբողջովին կը քաշէ
կ'առնէ:

Այս կերպով եփուած կաղամբը անփնաս
կըլլայ և անախորժ համը բոլորովին կը կոր-
սընցնէ:

ՀԱՆԵԼՈՒԿ

Թիւ 23

Տակաւին լուծուած չէ, նուէրն է եր-
գարան մը:

— 0 —

Թիւ 24

Թէ երկնից բարձրէն վար նետուիմ
Ամենեւին չի փնասիմ,
Իսկ թէ մի քիչ ջրով թրջիմ,
Ո՛հ, այն ատեն ահա մեռնիմ:

Լուծումն պարզ հանելուկի

Այժմ հոյ ազգիկն միտքիւն փառո-
գեղն կը յիշեցնէ կառ եւս կը նւանի՝
«գա՛յր կայ, հասէ՛ք օգնութեան», պո-
ռացադ խաբէրայից առակին:

Լեոն Մինասեան

Կը խնդրենք մեր Պատուարժան Բա-
ժանորդներէն որոնք տակաւին չեն վճարած,
բարեհաճին ընդ հուպ հատուցանել բաժա-
նորդագիրը: 6 ամիսին լրանալուն 1 թիւ մնաց:



ՏԵՂԻՈՅՍ ԸՆԹԵՐՑԱՐԱՆԸ



Դասեա՛ սեր զայնուիկ . . .

ԱԶԴ

ՏՕՔԹ. Ե ԹՈՎԱԾԱՍԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել արգոյ Հասարակութեան թէ վերադարձած է Սօֆիանէ և կընդունի հիւանդներ ամէն օր իր տունը ի Պալք Բազար, առաւօտեան ժամը 10էն 12, իսկ կէս օրէն վերջ 2էն 5: 2օրեքշաբթի օրերն կէս օրէն վերջ ժամ 2էն 5 ձրիապէս կը դարմանէ:



ԿԱՆՎԱՆԻՍԹ
Ամեն տեսակ
տպագրական կա-
ղապարներ պատրաստող, նաեւ
անձնական և թէ՛ առևտրական կնիքներ:
Սոյն կնիքները որ ըստ վերջին դրութեան
պղինձէ կը շինուին, հրապարակի վրայ երե-
ցած քառաչուէ կնիքներէ աւելի զիմացկուն են
և դիւրութեամբ կը ապագրուին. գինն ալ
քառաչուի գինէն տարբերութիւն չունի: Քա-
ղապարներ ըլլալիք յանձնարարութիւնք փութով
կը կատարուին: Դիմել ի վառնա շիլինկիր-
լէր փողոց թիւ 561: Գին գոհացուցիչ:

Այցետոմս, հասցէտոմս. նամակա-
ղլուխ, հրաւիրատոմս, բարենիշ, տոմ-
սակ, ևայլն ևայլն թէ՛ պարզ և թէ՛
ոսկեզօծեալ սէկ քանի գոյներով կը տը-
պագրուին: Քաղաքներէ եկած յանձնա-
րարութիւնք փութով կը կատարուին:
Գին գոհացուցիչ: Դիմել Հայելիի խըմ-
պագրութեան:

ՄԵՔԵՆԱՅԻՑ. ԳՈՐԾԱՐԱՆ

(ՊՈՒԼԱՊՐԻՍ)

Գ. Յ. ԲԱՐԹԱՄԵԱՆ և Բ. Է. ԲԱՆՉՈՒԳ

վառնա 5րդ թաղ ելարդ թապիա

Ամէն տեսակ մեքենաներու. շինութիւն և
նորոգութիւն, ջաղացքի թէ՛ շոգիով և թէ՛
պարզ ջուրով գործող մեքենաներ, նաեւ շո-
գեմակոյկներ. ջաղացքի վերաբերեալ ամէն
տեսակ երկաթեայ գործիքներ, դրամական
գասաններ, շէնքերու յատուկ երկաթեղէն-
ներ, տեսակ տեսակ ջրհաններ ևայլն ևայլն
կը պատրաստուին: Պատ. Յաճախորդք միշտ
գոհ մնացած են սոյն գործարանի շինու-
թիւններէն:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑԱԻ

ՆՈՐ ՔՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ

ԿԱՍ

ՀԱԽԱՐԱԾՈՅ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱԶԴ. ԵՐԳԵՐՈՒ

ՄԱՍՆ Ա.

ԴԻՆ 2 ՅՐԱՆԳ

Սոյն երգարանը որուն անհամբեր կ'ապաստէր ժա-
մանակէ մ'ի վեր, 216 էջերով, մեծ խնամքով սրբա-
գրուած, բոց ի հին ընտիր երգերէ կը պարունակէ նաեւ
բազմաթիւ նոր երգեր:

Փափաքողք պէտք է դիմեն առ Մ. ԽԱԶԻԿԵԱՆ՝
Արեւելեան տպարան, 2րդ. Ուշագիծ թիւ 1101 ՎԱՌՆԱ.
Վ առնայէ դուրս և օտար երկիրներէ պահանջուածնե-
րուն իւրաքանչիւրին վրոյ պէտք է աւելցնել 20 օան-
թիմ իւր բաթայի ծախք:

Отговорень. редакторъ: Н. Драгулевъ
Печатница «Взаимность» — Варна.